աչաց իմոց և սիրելի սրտի իմոյ գոլ կարէ նախանձօղն բանիս այրն այն, որ 'ի պատճառէ նախանձմանէ սրտէ իւրմէ յարիցէ առ սէր և գոյթ և շարադրեսցի իմաստութեամբ զամենայն, զոր ինչ հնար որ կարելի լինիցի փրկել ազգն Հայոց ի ծառայութենէ և արասցէ մեզ երջանիկ և վայելուչ որդէզրութեան նախահարց մերոց Հայկա, Արամայ, Տիգրանայ և այլն։

Նա ևս հարկաւոր է յիշեցուցանել ընդ միտս ձեր որ ոչ ոք գործք բարիք և բարութիւնք վասն հասարակաց մի՛ ոք ընդունեսցի միայնակ 'ի կամս իւր, և միմիայն յինքն խորհիլ գործել և կատար հասուցանել, որպէս ասէ մարգարէն՝ ձայն բազմաց գոցի իբրև ձայն յԱստուծոյ, նոյն գունակ ըստ բանին Տեառն Պօղոսի երկու և իրեք վկայիւք հաստատել կարէ ամենայն բան, սովաւ և բանական զօրութեամբ հոգոյ ճանաչիմք, զի զամենայն զոր ինչ բարութիւնք եթէ 'ի միայնակ միոյ յառնէ կարելի առնել՝ ուրեմն 'ի երկուս և կամ 'ի բազմութեան արանց Օգնականութեամբ գերագոյն և լաւագոյն քան զայն կարէ լինիլ, նա ևս 'ի Օգնականութենէ բազմաց մի՛ մնասցի ծանտրութիւն աշխատանաց 'ի թիկունս գործողին միայնոյ, այլ որպէս բեռինս միոյ ծանտրութեան բաժանելով ընդ բուռս բազմաց գոցի թեթևագոյն իբրև կից մի, նոյն գունակ զամենայն զոր ինչ գործ բարի և հնար ստանալոյ վասն բարու-